Երկուշաբթի (25 Մայիս) առաւօտուս ել տօնանման նաւից նոցա կանգնելով ի սահմանս Պէշիքտաշին։

Եշի (28 Մայիս). եւ ել վէզիրն երկիրպագանել թագաւորին եւ ասել բարով մնա, զի երթիցէ։ Եւ ծառայք թագաւորին ամենեքեան զինեցան՝ թօփչի և ճէպէճի եւ էնկիչէրի ընդ յառաջ նմա երթալով, այլ և պարոնք և իշխանք, էմիրք և ուլամայք, զաւիէսկէրք և մուֆտի՝ ալայ արարեալ երթային առաջի նորա հանդերձ սանճախովն իւրեանց. և ինքն եկեալ անցանէր երթալով ի սահմանեալ տեղի բանակին, եւ զկնի նորա սպահիքն ամենայն ձիաւորեալ և զինուք, որք ընդ նմա երթալոց են ի պատերազմ։ Եւ եղ աստ վէզիրն առ թագաւորն զայմախամ իւրն զՖիրէնկ Ահմէտ փաշան։ Եւ զոր դրամս ժողովեալ էր ըռոճկաց ծառայիցն՝ անդ ի բանակն տանել ետ սայլիւ, և անդ ցրուէր զռոճիկ ծառայիցն, որ ասի օլոֆէ, և թագաւորն եւս անդ ի Տաւուլթ փաշան էր։

Եւ Շաբաթի օրս (30 Մայիս) ել տօնանման նաւիցն եւ զնայր յառաջ ի վերայ Ֆռանկին ի պատերազմ։ Աւուրքս փոխեցին զմուղթասիպն։

Կիրակի օր (31 Մայիս) զէտրէնու թուղթն գրեցի Բ։

Յունիս ամիս օր Բշի։ Եւ յաւուրս ի Տաճկացն յամենայն կողմանց յելելոցն յայլ երկրէ, այլ եւ ի սահմանացս՝ գրէին զինքեանս զի երթիցեն զկնի նաւացն ի պատերազմի, որպէս զի ի ժամանակ պատերազմին նոքա լիցին յառաջ. եթէ զնակառակորդս իւրեանց պարտեսցեն եւ մնասցեն ամբողջ՝ ծառայ լիցին թագաւորին եւ ուտող ըռոճկաց նմին, եւ թէ պարտեալք լիցին՝ անցին ընդ այն, որ ասի ըստ բառին անուանց նոցա սէրտէն կէչտի, վասն որոյ եւ պատրաստեցան զի երթիցեն փոքր նաւովք եւ զայեխովն Ուսկիւտարու՝ թէ որչափ տանիցի։